ՔԱՀԱՆԱՅԱԿԱՆ ՁԵՌՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆՈՒՄ

Սեպտեմբերի 18-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնում, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի հանդիսապետությամբ, տեղի ունեցավ քահանայական ձեռնադրություն: Քահանայից լսարանն ավարտած ինը սարկավագներ, ձեռամբ ԱՄՆ հայոց Արևելյան թեմի Միջեկեղեցական հարաբերությունների բաժնի գլխավոր տնօրեն և Վաշինգտոնում թեմական պատվիրակ Տ. Վիգեն եպս. Այքազյանի, ստացան քահանայական աստիճան:

Տարիներ առաջ Ամենայն Հայոց Հայրապետի տնօրինությամբ Հայ Եկեղեցու սպասավորներ պատրաստելու նպատակով կազմակերպված քահանայից լսարան ընդունվեցին Հայաստանի տարբեր շրջաններից եկած բարձրագույն կրթությամբ դիմորդներ: Հերթական հունձքն ընդգրկում է տնտեսագիտական, ճարտարագիտական, մանկավարժական և այլ մասնագիտական կրթություն ստացած անձերի, որոնք պատրաստակամություն էին հայտնել հետևելու Հայ Եկեղեցու առաքելահաստատ կանոններին և հոգևոր սպասավորության կոչվելու:

Նախորդ օրը, երեկոյան ժամերգությունից առաջ, կատարվեց քահանայացուների ընծայման արարողությունը:

Հընթացս Ս. Պատարագի ձեռնադրող Սրբազան Հայրն օծեց ընծայացուների ճակատը, աջ և ձախ ձեռքերը: Վրեժ սրկ. Ալեքսանդրյանը վերանվանվեց Հովհաննես քահանա, Գուրգեն սրկ. Մարգարյանը՝ Ստեփաննոս քահանա, Առուշան սրկ. Հարությունյանը՝ Սեպուհ քահանա, Վարդան սրկ. Տեր-Մկրտչյանը՝ Սիմեոն քահանա, Ռոբերտ սրկ. Ստեփանյանը՝ Մաշտոց քահանա, Արմեն սրկ. Աբրահամյանը՝ Զգոն քահանա, Արկադի սրկ. Մաթևոսյանը՝ Շնորհք քահանա, Արտակ սրկ. Մարգարյանը՝ Թորգոմ քահանա, և Հակոբ սրկ. Տեր-Բարսեղյանը՝ Գևորգ քահանա:

«Այսօր կոչված եք ծառայելու Աստծուն ու մեր Եկեղեցու միջոցով ծառայելու մեր ժողովրդին, և դուք այդ ծառայության մեջ, առաջին անգամ ապագա գործունեության մեջ Քրիստոսին որպես խորհրդանիշ պետք է ունենաք: Քահանայությունն Աստծո կողմից տրված պարգև է, և դուք այդ պարգևը պետք է լավ օգտագործել իմանաք: Քահանայությունն ամեն մարդու չի տրվում. ընտրյալներին է շնորհվում՝ Աստծո Ս. Խորանի առջև: Ունենալով Քրիստոս որպես իսկական Հովիվ՝ պիտի առաջնորդեք ձեր ժողովուրդը դեպի հավիտենական կյանք: Որպես զենք ունեցե՛ք ձեր Խաչն ու Ավետարանը:.. Սիրեցե՛ք ձեր ժողովուրդը իբրև ձեր անձերը» (տե՛ս էջ 25),- նորընծա քահանաներին պատգամեց Սրբազան Հայրը՝ հորդորելով լծվել քարոզչական գործունեության և հովվական կյանքի:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

«ՀՐԱԺԱՐՈՒՄՆ»

ՆՈՐԱՕԾ ՔԱՀԱՆԱՆԵՐԻՆ Է ԴԻՄՈՒՄ ՁԵՌՆԱԴՐՈՂ ՍՐԲԱԶԱՆ ՀԱՅՐԸ՝
Տ. ՎԻԳԵՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԱՅՔԱԶՅԱՆԸ